2/26.7/83

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«15» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ0011-21

Ձեռնարկողը՝ ***«Բերրիություն» ԲԲԸ***
Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք

Գործունեությունը՝ ***«Մոլիձորի» անդեզիտաբազալտների երևակումում 2020-2022թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0011-21

< 15 > 01 2021թ.

Գեղարքունիքի մարզի Մոլիձորի անդեզիտաբազալտների երևակման տարածքում 2020-2022 թվականներին կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Բերրիություն» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտ համայնք

Ներածական մաս. Գեղարքունիքի մարզի Մոլիձորի անդեզիտաբազալտների երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Մոլիձորի անդեզիտաբազալտների հայցվող տարածքը վարչական տեսակետից գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունու ենթաշրջանում, Գեղհովիտ գյուղի վարչական տարածքում, Մադինա և Լեռնակերտ գյուղերից դեպի հարավ-արևելք համապատասխանաբար 4,5կմ և 3,5կմ հեռավորությամբ:

Անդեզիտաբազալտների երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքը հանդիսանում են գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր՝ արոտավայրեր: Նախատեսվում է կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 4.86հա մակերեսով տարածքում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական մերկացումների գործիքային տեղադրմամբ տոպո հիմքի վրա:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է պարզել տեղամասի բազալտների համապատասխանությունը «Блоки из горных пород для производства облицовочных архитектурно-строительных мемориальных и других

ՀՀ ԲՆՕՍԱՆՈՒՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
02543163

изделий» 9479-98 ԳՕՍՏ-ի, իսկ թափոնները որպես շինարարական ավազի խճի հումք ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95 և ՀՍՏ ԳՕՍՏ 8736-2014): Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95 և ՀՍՏ ԳՕՍՏ 8736-2014 ավազ շինարարական աշխատանքների համար տեխնիկական պահանջներին:

Ուսումնասիրվող երևակման ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS-84 կոորդինային համակարգով.

X1 – 4433988	Y1 - 8524271
X2 – 4434307	Y2 - 8524214
X3 - 4434327	Y3 – 8524274
X4 - 4434182	Y4 – 8524377
X5 – 4434083	Y5 – 8524468
X6 - 4434021	Y6 – 8524481

Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն հորատանցքերի և բացահանքի անցմամբ, հաշվի առնելով բնական մերկացումները, կատարելով համապատասխան փաստագրման և նմուշարկման աշխատանքներ:

Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով փորձնական բացահանքից կատարվելու է 150.0մ³ ընդհանուր ծավալով փորձնական հանույթ թարմ բազալտներից: Լեռնազանգվածից մենաքարերի պոկումը կատարվելու է մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ճեղքերը:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թաիկներով՝ 132-112 մմ տրամածով: Նախատեսվում է հորատել 15-20 մետր խորության 6 հորատանցքեր 110.0 մետր ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազաույն ելքը՝ 80-85%: Հորատվող ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին:

- Ժամանակակից դեյուվիալ առաջացումներ - IV կարգ,
- հողմահարված, ճաքճքված անդեզիտաբազալտներ -VII կարգ,
- խիստ ճեղքավորված անդեզիտաբազալտներ - VIII կարգ,

Նախատեսվում է 1-ին խմբի 6 հորատանցքերի հորատում ՈՒԳԲ-50Մ տիպի ինքնագնաց հաստոցով, հորատող հաստոցի 6 տեղակայում և տեղահանում:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը ու բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների

- հորատահանուկի փաստագրում – 110.0գծ.մ,
- փորձնական բացահանք - 20.0գծ.մ:
- Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով ըստ ներկայացվող ծրագրի հորատանցքերի հանուկից կնմուշարկվի 16 հանուկային նմուշներ և 2 մենաքարեր (բացահանքից): Հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը մինչև 5մ (80մ):

Մենաքարերը վերցվելու են փորձնական հանույթի բացահանքից, միջին չափերը կկազմեն 30×30×30 սմ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բազալտների քիմիական կազմը կուսումնասիրվի 3 նմուշներով, որոնցից մեկը՝ վերցված բացահանքից: Պետրոգրաֆիական նկարագրությունը կտրվի հորատահանուկից վերցված 2 նմուշներից պատրաստված շլիֆների հիման վրա:

Բազալտների քիմիական կազմը կորոշվի ըստ 3 նմուշների անալիզի, ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 18 նմուշներով (հորատահանուկ 16 նմուշ, մենակաքար 2 նմուշ): Նմուշներից 10-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 8-ը կրճատ: Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 2 հղկուկների միջոցով: Լաբորատոր հետազոտման կենթարկվի մեկ համախառն նմուշ խճի ուսումնասիրման համար:

Լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումները նախատեսվում են կատարել համապատասխան մասնագիտացված լաբորատորիայում:

Լեռնային զանգվածից նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ 20x6.0x2.0=240մ^3 ծավալով, որից 18մ^3 լանջային փուխր նստվածքներով՝ հողաբուսական նյութի խառնուրդով, 72մ^3 հողմնահարված ապարներից և 150մ^3 չհողմնահարված, թարմ ապարներից: Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով փորձնական բացահանքից մենաքարերի պոկումը կկատարվի մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ճեղքերը, որոնք կենթարկվեն շտկամշակման ГОСТ 9479-2011-ի տեխնիկական պահանջներին համապատասխան բլոկների ստացման նպատակով: Բլոկներից երեսպատման սալիկների ելքի որոշման նպատակով կիրականացվի ընդհանուր ծավալով ստացված բլոկների փորձնական սղոցում, որը կկատարվի ընկերությանը պատկանող քարի մշակման արտադրամասում: Աշխատանքների ընթացքում կատարված ծախսերի և վերջնարտադրանքի քանակի մասին ստացված տվյալները կդրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում:

Մոլիձորի բազալտների երևակման տարածքում հատուկ ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություններ չեն կատարվելու:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հորատանցքերի և բացհանքի անցման ընթացքում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի հրահանգի բոլոր պահանջները:

Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի հարթ ռելիեֆը, ինչպես նաև ճանապարհների բարվոք վիճակը, ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում: Հետևաբար, հողերի խախտում կատարվելու է միայն փորձնական բացահանքի տարածքում: Աշխատանքների ոչ մեծ ծավալները, փորձնական բացահանքի տարածքում շրջակա միջավայրի վրա բնապահպանական տեսակետից կունենա աննշան ազդեցություն: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ձեռնարկության կողմից նախատեսվում է հատկացնել 90000 (իննսուն հազար) դրամ:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՕՑԵՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ENVIRONMENTAL EXPERTISE CENTER
RA STATE NON-COMMERCIAL ORGANIZATION
RA STATE ENVIRONMENTAL ASSESSMENT SCIENTIFIC CENTER

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում մշակութային հուշարձանների, բնության հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

Գործունեության ենթակա տարածքում Կարմիր գրքում գրանցված կենդանիներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի հավաքում առավելագույնը 35լ տարողությամբ հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում Մարտունի քաղաքային համայնքի աղբահավաք կետեր, պայմանագրային հիմունքներով,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով ջրցանում երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների երկայնքով և փորձնական բացահանքի սահմաններում, Փոշենստեցման համար անհրաժեշտ ջրի տեսակարար ծախսը կազմում է 1.5լ/մ^2, աշխատանքների իրականացման ընթացքում օրական կտրվածքով կպահանջվի մոտ 360լ ջուր: Փոշենստեցման նպատակով և անձնակազմի խմելու համար օգտագործվող ջուրը մատակարարվելու է պայմանագրային հիմունքներով մոտակա բնակավայրից: Խմելու ջրի օրական պահանջարկը կկազմի 34.5լ (5 աշխատակցի հաշվարկմամբ), տեխնիկական ջրինը՝ 1806լ: Հորատումը կկատարվի հատուկ լուծույթների կիրառմամբ՝ փոշեգոյացումը նվազեցնելու/կրճատելու համար,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
- խախտված լանդշաֆտի վերականգնում, ինչի նպատակով երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո փորձնական բացահանքի տարածքում կկատարվեն տարածքի բարեկարգման, հարթեցման աշխատանքներ, բացահանքի կողերի թեքության անկյունները փոքրացվելու են, նախքան փորձնական արդյունահանումը հանված և կուտակված հողային շերտը հետ է փռվելու հարթեցված մակերեսի վրա
- բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան,

երևակման տարածքում ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդում փոշու և ծխագազերի մոնիթորինգ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- հարակից ձորակով հոսող գետակի և Մարտունի գետի վտակի ջրերի նմուշառում գարնան և աշնան ամիսներին,

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 200.0 հազ.դրամ, այդ թվում՝ մթնոլորտային օդի մշտադիտարկման համար 70.0հազ.դրամ, ջրերի մշտադիտարկման համար՝ 80.0հազ.դրամ, կենսաբազմազանության մշտադիտարկման համար՝ 50.0հազ.դրամ:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է խստորեն պահպանել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև բնապահպանական այլ իրավական ակտերով ամրագրված նորմերի կատարումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Բերրիություն» Ա/Մ Մարտունու Շրջանային Միավորում ԲԲԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Մոլիձորի անդեզիտաբազալտների երևակման տարածքում 2020-2022 թվականներին կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան